

ՅՈՒՆԻՍԻ ՏԱՐԻ

# ՄԱՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մեջ:

Օտարաբաղաբանիք դիմում են ուղղակի  
Тифлисе, Редакция „Манак“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների կամար վճարում են  
իրաւանչիւր բառին 2 կոպէկ:

## ԲԱՎԱՆՈՒԿԱԿՈՒԹԻՒՆ

Մեր գաւառական գործերը: — Ներքին տեղաւորութիւն: Բարեկեցիկ գործարարներ: Երկու նամակների առիթով: Նամակ Կարապետի: Ներքին տեղաւորութիւն: — Արտաքին տեղաւորութիւն: Նամակ Գեորգիայի: — Մշակութիւն: Յետադիմացի: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց: — Բանասիրական: Հին-Բայազէթի շրջակայքը:

## ՄԵՐ ԳՆԱՆՈՒԿԱԿՈՒԹՅՈՒՆ

Հուշում մեջ եղած անկարգութիւնների առիթով մի շարք նամակներ տպելուց յետոյ, մենք սրտիպիսի եղանակով նոյնպէս այն բոլոր խնդրակիրների պատճենները, որոնք ուղարկված էին Վ. Ե. Կաթողիկոսին Արիստակէս վարդապետ Սեդրակեանին Հուշոց հեռագրելու առիթով: Խնդիրների այդ պատճենները:

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ս Վ Ա Ն

### ՀԻՆ-ԲԱՅԱԶԷԹԻ ՇՐՋԱԿԱՆԵՐԸ

II

Քուրդերը ապրիլ ամսում ոչխարներին չեն կէտում, որովհետև նրանք չափազանց նիւար լինելով, հազի կերակրում են գաւառներին, մայիսին ոչխարի կաթից միայն պանիր են պատրաստում, իսկ յուլիսի սկզբից իւր իւր պատրաստելու համար նախապէս կաթը չիտում են մածոն, ապա մածոնը հարկով կաշոյ խնցի մէջ ստանում են իւր, իսկ թանք եփելով ստանում են «ծածիկը» որին փամբակում կոչում են չուսի իսկ Երևանում չուս (ԿՅՈՒՄԻ), օգտատու և սեպտեմբեր ամիսներում կրկին պանիր են պատրաստում, որ ծածիկի հետ միասին շատ լաւ և երկար պահում է տեղերի մէջ, որին առհասարակ «մրթիկ» են կոչում: Քուրդերի առևտուրը գլխաւորապէս լինում է աշնան և այդ գլխաւորապէս կայանում է ոչխար, բուրձ, իւր և պանիր ծածիկում: Քուրդը և գրեթէ տեղական բոլոր ազգաբնակչութիւնները ոչխարի միւսը նախադասում են տաւարի միտց և աճա վեցերորդ ամիսն է որ այստեղ տաւարի միտ չենք տեսել: Քուրդերը փայլաղամ (ամարանոց) կենում են իրանց ընտանիքներով և կանկարասիքով մէկ տեղ վրաններում, որ իրանք պատրաստում են այժմ մազից, Ամեն ընտանիք ունի իր սեփական վրանը, որ ծառայում է նրան մանուկներ, սեփական բնակարանի և հիւրանոցի տեղ, բայց երկրորդը (ցեղականները) բացառութիւն են կազմում, նրանք ունեն և առանձին վրան հիւրերի համար: Քուրդի սովորական կենակոչութիւնն է մածոն և ծածիկ: Մի ուսում են միայն այն ժամանակ, երբ իրանց հօտից մի ոչխարի ոտ յանկարծ կորուցում է կամ ոչխարը հիւանդանալու պատճառով մորթում են: Իսկ պատուաւոր հիւրերին պատասխանում են գաւառով փառով: Գաւառով փառը բուրդի սիրելի և ամենաբարեկեցիկ կերակուրն է: Կերակուրը առանց բացառութեան ուտում են ձկնով առանց շերտ: Գալի, իսկ փառը առանց հացի: Հացը փառում

որոնք ծածկվել են հարկուրաւոր ստորագրութիւններով, մի բանի նամակներ, որոնք հաստատում են Արիստակէս վարդապետի Հուշում մնալու փաստակարգութիւնը, որոնք սննդայն յարձակվում են այդ արեղայի գործունէութեան վրա և որոնք պատկանում են նոյն իսկ շուշեցիների գրչին, մենք ստացանք այն ժամանակ, երբ արդէն պ. Բաբաջանեան իր խմբով հեռացած էր Հուշոց:

Այս իրողութիւնը մեզ հաստատում է, որ Բաբաջանեանի հեռանալուց յետոյ էլ Հուշում մնացել է մի կուսակցութիւն, որ վարդապետի թշնամի է և անգաղար պէտք է աշխատէ փաստել վարդապետին, պէտք է ձգտէ նրա հեռացելուն: Ամեն բանին ինչ անէ վարդապետը այդ կուսակցութիւնը պէտք է ընդգրկմագրէ: Սա իրողութիւն է: Վեր-

են մի կտոր սեղան-տախտակի վրա առանց սքիւռոցի և գառնով փառը մի մեծ պղնձի թեփուցով դնում են սեղանի մէջ տեղը: Տանուտեղը ձեռները վեր բարձրով փառը ձեռներով բաժանում է հիւրերին և մի անգամ կտորները դարձեալ ձեռներով կտրատելով դնում է փառի վրա, վերջինիս վրա աւելացնելով և մի մի բուրդ ձուռով, իւրով և կանաչով պատրաստած կերակուրը, որին փամբակում փոխ են կոչում: Հաւաչ հացը, որ օրը երկու անգամ թխվում է սաշի (բով) վրա, մտաւայում է և ամանի, հացի և անձեռնոցիներին տեղը Հացից յետոյ շուր է տրվում լուացվելու համար: Հիւրանոցը բուրդը մեծ պատուով և յարգանքով է ընդունում իր հիւրին, իսկ եթէ հիւրը լինի մի ծանայող, մանաւանդ փոքր ի շատ բարձր աստիճան ունեցող, տանուտեղը ձեռները կտրածից դուրս պէտք է ծառայէ և չը նստի, մինչև որ հիւրանոցի վրայ պարտը չը հրահանի նրան, իսկ այսպիսի պատիւ տանուտեղը թիւրք էֆէնդիների և փառաների կողմից հազաղիւտ պատանձներն են եղել: Որքան պատիւ էին համարում և զարմանք էին յայտնում, երբ ես հրախորդ և խնդրում էի տանուտեղից մասնակցել ինձ հետ հացկերութիւն ծամանակ և մանաւանդ երբ հետաքրքրվում էի տեղեկութիւններ հաւաքել նրանց տնտեսական, հասարակական կենսելի վերաբերութեանը: Աւելի զարմացմամբ շրջապատում էին ինձ կանաչը և հետաքրքրվում էին լսել իմ խօսակցութիւնն: Երեկ նրանք վատ գաղափարներ ունէին կազմած առանձին վրա, որովհետև տեսնելով ռուս ծառայողի նրանց հետ հասարակ և բարեկամական վարմունքը, նրանք իրանց զարմանքը արտայայտում էին այսպիսի բառերով: «Ինչ բարի մարդիկ են եղել առանձինը,» հապաքնի մեր մարդիկը մեզ միտ առում են թէ նրանք զավուրներ են, նրանք վատ, չափազանց հպարտ և չարահոգի մարդիկ են:» Քուրդերը բացի իրանց մարկենի լեզուն ուրիշ լեզուով չը գիտեն խօսել: Բացառութիւնները շատ սակաւ են, և այն զբլխաւորապէս եգիպտացի մէջ: Իմ ծառան եգիպտացի էր, և բացի իր մայրենի լեզուն գիտէր

Չապէս ինքն հայր Սեդրակեանն էլ չէ պատկանում այն մարդկեանց թւին, որոնք աշխատում են զպալի իրանց կրթերը և հաշտեցնել կուսակցութիւնները:

Այդ մարդու պատճառով պէտք է փրատ կրէ մի այնպիսի ուսումնարան, որ լաւ միջոցներ ունի և շուշեցիներին կարող է ճշմարիտ օգուտ տալ: Եւ ինչ անհրաժեշտութիւն կայ թողնել մի վարդապետի կենարուն է... Եթէ Արիստակէս վարդապետի դէմ շուշեցիք ոչինչ չունենային, այնու ամենայնիւ նրան այստեղ թողնելը աւելորդ էր, ուր մնաց, որ այսբան անբուսակցութիւններից և տուած փաստներից յետոյ Արիստակէս վարդապետը յանդանի մնայ Հուշում:

Միթէ ճշմարիտ մենք ուրիշ հոգևորականներ չունենք: Միթէ

խօսել բաւականին լաւ թէ հայերէն թէ թիւրքերէն, Նա իմ և բուրդերի խօսակցութեան ժամանակ թարգմանի պաշտոն էր կատարում: Իրազինի գաւառը հարուստ է հանքերով և հանքային ջրերով: Այստեղ կան ծծումբի, բորակի (ՅՍՄԻՐԱ) պղնձի և երկաթի հանքեր, իմ ճանապարհս ընկնում էր այն տարածութեան վրա, որտեղ կային ծծումբի հանքեր: Ահազին հարթ տարածութեան վրա փռած էին ծծումբային քարերի կտորներ, նրանց մէջ յաճախապէս աչքի էին ընկնում շատ մաքուր ծծումբի կտորներ և մի քանի վերտաշափ տարածութեան վրա ծծումբի հոտը մտնում էր թիւրք մէջ: Միւս հանքատեղերը են տեսնելու միջոց չունեցայ: Այս գաւառի շատ տեղից բղխում են հանքային տաք ջրեր, յատկապէս ծծումբային ջրերի աղբիւրներ, բայց ես տեսայ միայն չորս տեղ մէկը Կիսիկից հիւզ վերտաշափ հեռաւորութեամբ\*\* երկրորդը Կուր անունով գիւղի մօտ, երրորդը և չորրորդը Մուղաղաբայ գիւղի մօտ, բոլորն էլ Եփրատի ափերի մօտ: Ամենից լաւը և մաքուրը Մուղաղաբայի մօտինն է: Նա իմ տեսածներից բոլորիցն էլ գերազանց էր թէ իր տաքութեամբ և թէ իր մաքրութեամբ: Ես չունենալով ջերմաչափ չը կարողացայ իմանալ ջրի տաքութեան աստիճանը, բայց միայն կասեմ, որ ջուրը իր վիժման տեղը այնքան տաք էր, որ ոչ թէ լողանալ չէր կարելի, այլ և ձեռն երկու բոլակ անկաղելի եղաւ ջրի մէջ պահել: այդտեղ ձուս խաչել կարելի կը լինի, թէ և ես իսկապէս չը փորձեցի, բայց փորձողները հաստատեցին իմ կարծիքը: Կրա համար էլ ջուրը իր ակնից ծծմբաքարի վրայով մի խողովակաձև առուակի միջով հոսելով թափվում է բնութենից կազմած մի աւազանի մէջ: Մէկ ուրիշ տեղ Արծաթի գիւղի մօտ, կայ սառն ու թիւթու ջուր, բայց ես չը տեսայ: Սակայն թէ հանքերը և թէ հանքային ջրերը թողած են առանց հետազոտութեան և առանց մշակելու, ուրիշն թէ երկրը և թէ թիւրքաց պետութիւնը ոչինչ օգուտ չեն բաղել դրանցից: գուցէ դրա պատճառը անտառի բացակայութիւնը լինի:

Ժողովրդի ձայնը ոչ որ չը պէտք է լսի:

Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ եկող ուսումնական տարվայ համար Հուշոց հոգաբարձութիւնը ուսումնարանի տեսչութիւնը յանձնել է պ. Ս. Մանդինեանին և իբրև ուսուցիչներ հրաւիրել է պ. պ. Աղայեանցին, Ղուկասեանին, Գիւլզատեանին և այլն:

Այս պարոններին շատ զրոշուար է չէզոք մնալ: Ուսումնարանը սերտ կապ ունի թէ փոխանորդի, թէ հոգաբարձուների և թէ ժողովրդի հետ: Այդ թէ ուշ դրանք պէտք է մի որ և է կուսակցութեան կողմը բռնեն (եթէ արդէն չեն բռնել) և անցեալ տարվայ անկարգութիւնները պէտք է նորից սկսվեն:

Խորհուրդ ենք տալիս հոգևոր իշխանութեանը անպատճառ հե-

Կիսիկի գաւառը իր լեռնոտեղեկանք օգի բարեխառնութեամբ և բաղադրամ աղբիւրների բազմութեամբ կարելի է համեմատել Փամբակ և Լոսի գաւառների հետ: Բայց մի մեծ տարբերութիւն կայ այդ երկիրների մէջ, որ իսկոյն ամեն ճանապարհորդի աչքին կանգնի: Այդ տարբերութիւնը այն է, որ Կիսիկի թէ և հարուստ է իր հանքերով և հանքային ջրերով, սակայն զուրկ է անտառներից, այն ինչ փամբակը և Լոսին ունեն մի քանի տեղեր հանք, օրինակ, պղնձի և երկաթի, հանքային ջրեր, յատկապէս երկաթի, նմանապէս և բաւականին հարուստ անտառներ, իսկ հողի արգասիքութեան և պտղաբերութեան կողմից Կիսիկը գերազանց է վերայիցալ երկու գաւառներից և եւ Այդ երկիրը մեծ յարմարութիւն ունի թէ հոգաբարձութեան և թէ անասնապահութեան, սակայն դիւրութեամբ, կամ լաւ է ասել, աւազակաբարոյ, ծոյլ ջուրը ազգաբնակչութիւնը անընդունակ է օգուտ քաղել բնութեան այդ պարգեից, նա չէ քաղում այն օգուտը, որ կարելի է սպասել պարագանց այդ երկու ճիւղիցն ևս: Բնակեցրու այս երկիրը փամբակը և Լոսի այնտառներ և գործունէայ թէ և նախապետական բնակիչներով, և մի քանի տարից յետոյ կարելի կը լինէր նրան բաղադրել կովկասի ամենահարուստ երկիրների հետ: Սակայն չը նայելով քուրդերի զործից փախելուն և անընդունակութեանը դարձեալ նրանց մէջ հազաղիւտ են, ազգաբնակչութիւնը իսկ մուրացկաններ երբէք չեն տեսնել: Ամեն տեղ նկատում են անգործունէութիւն և բերրի հողը անմակ: Բացառութիւնը կազմում են միայն հայ գիւղերը, որոնք այս գաւառում թուով հինգ են, բայց անցեալ պատերազմը խլելով հայերի ձեռքից, եղև և գոմէշը, արօրը և գոթաբնը, նրանք ևս դատապարտեց անգործութեան: Այժմ հայը ձեռքերը ծոցը դրած, արտասուք թափելով էր անմակ հողերի, իր դեռ անցեալ տարվայ սկզբում հերկած, բայց չը ցանած տեղերի վրա, գրկված այնտառելու ամեն միջոցից, անհանգիստ սրտով սպասում է քաղաքակրթված և լուսաւորված եւրոպայի վճռին:

Մատթէոս Տէր-Պետրոսեանց

\* Ռուս հազարատու և առհասարակ ծառայողներից քուրդը, մանաւանդ քրդի կանայք, ռուս են կոչում:

\*\* Այստեղ եփրաբը հոտում է մի քանի սահմանափակ տարածութեամբ մի բնական զետեան փոքի միջով որ յայտնի է «բնական կանոնը» անունով:

ապագայի համար հարկադրանքներ և այնպիսի մարդ-նշանակիչ որ կարողանար հաշտեցնել կուսակցութիւնները: Այսպիսով հոգևոր իշխանութիւնը ապահոված կը լինէր Հուշու գր-պարտը ինտրիգաներից և մի և նոյն ժամանակ տեղիք չէր տայ մի քանի կասկածներին, որ ունեն շուշեցիք և որոնց մասին մեզ շատ անգամ գրել են:

Կրկնում ենք Արիստակէս վարդապետի հետաքննելու Հուշուց անհրաժեշտ ենք համարում:

Վ. Տ.

Ներքին Տեսութիւն

ԿԱՐԱՊԵՏ Լ. ԲԱՐԱՅԵԱՆԻ ՄԵՏԱԲՈՒՄՍՆՈՒԹԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ ՕՐԿՈՒԹԱՌՈՒՄ

Երբ ձանապարհորդը մտնում է Գողթան գաւառի այն մասը, ուր դրած են Ազուլիս և Օրդուբաժ գիւղաքաղաքները, մի առանձին տեսարան է բացվում նրա առջև, ուր նա նկատում է երկու միևնույն հակառակ մրցութիւններ՝ բնութեան և մարդկային աշխատութեան մէջ: Բոլորովին մերկ և ժայռոտ լեռների նեղ ձորերում, աւազուտ և ցամաք հովիտների մէջ նա տեսնում է կանաչազարդ օսպիանների նման փոքրիկ և մեծ դիւզեր, որ թափված են գեղեցիկ այգիների և պարտեզների մէջ: Վարդկային աշխատող ձեռքեր յաղթող է հանդիսանում այստեղ և ցամաք անապատների մէջ դրախտ և գոյացնում:

Այդ տեսարանները յալամայից զարթեցնում են ձանապարհորդի մէջ մտածութիւններ հայ մարդու տոնու գործունէութեան վրա. — բաւական է, որ նրան միջոց են տալիս աշխատելու, նրան չեն արգելում, չեն խեղդում, և նա գիտէ ինչպէս պէտք է վարվել բնութեան հետ և ինչպէս արդիւնաւորել նրան: Կարծես ազգերը մի առանձին կուռնու ունեն կենցաղի և քաղաքակրթութեան մէջ, ահա այստեղ դրած են երկու միևնույն հարեան ժողովուրդներ — թուրքը և հայը. — առաջինը եղել է մի ժամանակ այդ երկրի տիրապետողը, իսկ վերջինը նրա ստրուկը: Իսկ այժմ Այս մտէք թուրքի խրճիթը, դուք կը տեսնէք աղքատութիւն և թշուառութիւն միայն, իսկ այն գեղեցիկ աները, որ մեծ քաղաքներում միայն կարելի է գտնել, այն պողատու այգիները, պարտեզները և մշակված դաշտերը, բոլորը պատկանում են հայերին:

Բնութիւնը այստեղ ժլատ է, նա այնքան չէ տալիս, որ կարողանար յագեցնել հայի անյազ արդիւնաբերութիւնը, և նա դուրս է գալիս իր նեղ ձորերից, թողնում է իր մերկ լեռները և պարտեցնում է իր ձեռքում Կովկասի վաճառականութեան գլխու որ մեքենան: Ազուլեցի հային դուք կը տեսնէք Մօսկովայի, Նիժնայի, Մարսելիայի և Մանչեստրի բորսաների վրա:

Գլխաւոր արդիւնաբերութիւնը Ազուլիսի, Օրդուբաժի և նրանց շրջակայ գիւղաքաղաքի կայանում է մետաքսի մէջ. կան գիւղացիներ որ ամեն տարի 10—15—20 պուդ գոկոններ (բոժոժներ) են ծախում: Բոլոր անցնում է հայ վաճառականների ձեռքը: Այստեղ է վաճառվում և բոլոր մետաքսը, որ ստացվում է հարեան Միւնխենի և Նախիջևանի գաւառներում: Բայց Ազուլեցիք գնելով մետաքսի կոկոնները, այնպէս անպատրաստ չեն արտահանում, այլ իրանց երկրում թել են քաշում:

և դրա համար կան երեք գործարաններ, որոնք պատկանում են պ. պ. Արասխանեանցին, Նուսնուսեանին և Բարայեանին: Մենք կը խօսենք վերջինի վրա, որպէս ամենակատարաւոր և առաջնակարգը:

Բարայեանի գործարանը հիմնված է 1870 թ.ին Օրդուբաժում: շոգեշարժ մեքենաները կազմված են վերջին սխտեմայով և բերված են Ֆրանսիայից: Գործարանը արդիւնաբերում է երեք տեսակ մետաքս, որ են Ֆիլա տուր (այսինքն թել, որ քաշվում է բոժոժներից) և երկու տեսակ մետաքս հինաճի ու գործու աւաճի համար, որ ուղղվում են քաշված թելից: Վերջինները պատրաստվում են եւրօպական գործարանների ընտիր օրինակով և կարող են ուղղակի մտնել որ և իցէ Ֆարսիկա որ արհեստագործում է մետաքսեղէն ապրանքներ: Ֆիլա տուր կոչված մետաքսը պատրաստվում է գործարանի երկու բաժիններում, որ գետեղված են երկու առանձին մասերի մէջ, իսկ նրանից ողորված մետաքսը հինաճի և գործու աւաճի համար նոյնպէս գործարանի երկու մասերում, որ առաջիններից բաժանված են միջնապատով: Գործարանի շինութիւնը գտնվում է գործարանատիրոջ սեփական հողի վրա, եւրօպական ձևով, որ մի առանձին հակապատկեր է ներկայացնում իր շրջակայ ասիականութեան դէմ: Եւրաքանչիւր շոգեշարժ մեքենան ունի 6 ձիան գործութիւն: Ֆիլա տուրի բաժինների ամեն մէկը ունեն 60 մասական ձախարակներ և 30 մասական ջրանոցներ բոժոժները փոփոկացնելու և բացանելու համար, իւրաքանչիւր բաժնում աշխատում են 90 հոգի մշակներ, ստանալով 130 ռուբլ առձին մի տարվայ մէջ: Հինաճի և գործու աւաճի բաժիններում ամեն մէկը ունեն 250 կան ձախարակներ և 1700 իլիկներ թելը կծկելու համար, երկուսի մէջ աշխատում են 100 հոգի, ստանալով իւրաքանչիւրը 120 ռուբլ առձին մի տարվայ համար: Բացի զրանցից գանազան գործերով սպասուարում են գործարանում 40 հոգի: Եղբի կաթնաները երկու տալիս տեղային վայրով 60-ից մինչև 70 պուդ օրվայ մէջ: Պատրաստված մետաքսի քանակութիւնը կախումն ունի գործարանի շրջանառութիւնից (оборот), համեմատ վաճառականութեան գործիւն և գործարանատիրոջ նիւթական միջոցներին: Ստացված մետաքսը ծախվում է Մօսկովայում և արտասահմանում, նայելով թէ որտեղ աւելի շահաւոր է:

Պարոն Բարայեանի գործարանը ունի իր օգուտները տեղական ժողովուրդականութեան համար ոչ միայն այն կողմից, որ նա մեծ զարկ է տալիս շերամապահութեան և մետաքսի արդիւնաբերութեան, այլ նրա մէջ և նրանով ապրում են հարեւաւոր ընտանիքներ և մշակ մարդիկ, որոնք առանց այդ գործարանի պիտի մաշվէին աղքատութեան մէջ: Գործարանի այն բաժիններում, ուր պատրաստվում են հինաճի և գործու աւաճի համար թելեր, աշխատում են կանայք, իսկ Ֆիլա տուրի բաժիններում միայն տղամարդիկ: Հարկը հարկաւորները երկու սեռերի մէջ կարված է: Զարմանալիս այն է, որ կանանց թւում չը կայ և ոչ մի մահմեդական գործու աւաճի, չը նայելով, որ գործարանատէրը խարութիւն չէ գնում ազգութիւնների մէջ, բոլոր կին — աշխատողները հայեր են: Կրօնը այստեղ էլ ունեցել է իր վնասակար ազդեցութիւնը, թող չը տալ հարեան գերիին իր սեփական աշխատանքով ապրելու: Իսկ տղամարդ գործու աւաճի խառն են մահմեդականներից և հայերից: Գործարանի մէջ տիրում է կատարեալ կարգաւորութիւն և ձաշակ: Ամեն տեղ աչքի են զարկում մաքրութիւն և խիստ կանոններ:

Վերջոցնելով մեր յօդուածը, չենք կարող մի քանի խօսք շատել գործարանատիրոջ գար-

մանակը ընդունակութեան մասին, որ կարող է հայ մարդու խելքի օրինակ լինել թէ որքան շնորհալի է նաև Ֆարսիկայից գործունէութեան մէջ: Պ. Բարայեանը մի հասարակ գիւղացի է Հանդամէջից, որ սկզբում համարեա աղքատ է եղել նա յղացելով իր մտքում Օրդուբաժի մէջ մետաքսամանութեան մի գործարան հիմնելու գաղափարը, կազմում է մի ընկերութիւն, և ուղեւորվում է Ֆրանսիա մեքենաներ գնելու: Նա ոչ միայն կարողանում է ձեռք բերել ցանկացած մեքենաները, այլ մի քանի անկախ մէջ սովորում է նաև նրանց կազմելու և բանալիելու ձևերը, այնպէս որ, պ. Բարայեանը այժմ իր հիմնարկութեան որպէս տէրը, նոյնպէս և հմուտ վարպետ է: Մի քանի տարվայ մէջ նա կուս վարպետ է: Մի քանի տարվայ մէջ նա կուս վարպետ է ինքն գործարանի կատարեալ տէրը դառնալ:

Ի նկատի ունենալով, թէ այսպիսի գործարանները այն ժամանակ միայն կարող են մեծ շահեր և մեծ արդիւնաբերութիւն ունենալ երբ ընդարձակ շրջանառութեան մէջ կը լինեն — և տեսնելով գործարանատիրոջ իր հիմնարկութիւնը տեղային և առեւտրական պահանջների համեմատ ընդարձակ միջոցների կարող լինել, — մենք խորհուրդ կը տայինք մեր ազուրեցի գրամատերերին օգուտ քաղել այդ գործարանից մի հիմնարկ ընկերութիւն կազմելով պ. Բարայեանի հետ: Այն ժամանակ գործարանը աւելի շահաւոր պայմանների մէջ դրվելով, կարող էր աւելի արդիւնաբեր լինել: Աւելորդ չէր լինի, եթէ ինքն կառավարութիւնը տեղային մետաքսի արդիւնաբերութիւնը բարձրելու համար օգնութեան ձեռք մեկնէր գործարանատիրոջը, որին նա այժմ կարօտ է: Եթէ ոչ մի մեծ անտեսական հարուստ կը լինէր, եթէ այդ գործարանը ընկեր:

\*\*\*

ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

«Մշակիւն № 118-ի մէջ տպեցինք մի նամակ խորագրին ուղղած, որի հեղինակ պ. Վիլյոնը Վիլյոնեանց մի քանի մեղադրանքներ էր բարձրում Թիֆլիսի նահանգի թեմական տեսուչ պ. Տէր-Յովհաննիսեանի վրա: Մի քանի օրից յետոյ ստանում ենք պ. Ա. Մէլքե-Փաշայեանի նամակը, որով պարոնը, փաստաբանելով պ. Տէր-Յովհաննիսեանից համար, մասամբ արդարացնում է պարոնին նրա վրա դրած մեղադրանքներից և մասամբ գովում է նրա գործունէութիւնը, ի նկատի ունենալով, որ անապուստութիւն է այն անձի կողմից, որը տեսնելով մի արժանաւոր մարդու հասարակութեան համար անկեղծ աշխատութիւնը, սկսէ բողբոջել ի զուր տեղ իր անձնականութիւնից գրգռած արտասուրբէլ այդ անձի գործունէութիւնը»:

Երկու նամակներին էլ, իբրև մասնաւոր անձանց կարծիքներին և տեղեկութիւններին մշակք տեղ տուէց իր էջերի մէջ: Առաջին նամակը տպվով մենք կարծում էինք, որ պ. Տէր-Յովհաննիսեանց անյապաղ ներդրութիւն յանձն կաննի քրքրել իր պաշտօնական թղթերը, վեր առնել զրիչը և գրել օրինաւոր պատասխան, հերքել մեղադրանքները նրանց դէմ փաստեր բերելով: Մենք չենք կարող ենթադրել, որ համալսարանի իրաւաբանական մասնում աւարտած երիտասարդը, մասնակարգական թերթի խմբագիրը չը գիտէ գրել գործածել իր պատել պաշտպանութեան համար: Պ. Ա. Մէլքե-Փաշայեանի նամակը չէ հերքում զլսաւոր փաստեր, որոնց բերել է պ. Մ. Վիլյոնեանց: Պարոն Տէր-Յովհաննիսեանին ասում են, որ ուսումնարանները պրօգրամ չունեն, որ ուսու-

ցիւններին արդեւլած է նախկին տեսչի պրօգրամին հետեւել, որ ծխական ուսումնարաններից մի քանիսը մինչև այժմ չեն արձակված, որ պարոնը սկսելու անգամ անկանոն է վարվում ուսումնարանների անտեսական հանդէսներում: — և նա լուում է և թող է տալիս պ. Ա. Մէլքե-Փաշայեանցին իր տեղ պատասխանել:

Այդ մեղադրանքները այնպիսի բնաւորութիւն ունեն, որ դրանց պէտք է կամ դրականապէս հերքել կամ հաստատել: Այդ բանը կարող է անել պ. տեսուչը, իսկ պ. Մէլքե-Փաշայեանի փաստաբանութիւնը բողբոջելու ակտը է:

Ի՞նչ կը վերաբերի պ. Մէլքե-Փաշայեանի կարծիքին, որ համալսարանի իրաւաբանական մասը աւարտած պ. Տէր-Յովհաննիսեանի համար արքունական ծառայութեան մէջ միշտ կը գտնվի պատշաճաւոր պաշտօն, որից պարոնը նիւթականապէս աւելի կարող էր շահվել, քան թէ տեսչի պաշտօնից, մենք այդ կարծիքը չենք բաժանում: Ներկայ դարը ընտանեկան է, մասնաւոր մեր ազգասէր պաշտօնականատիրոջը աւելի քան թէ հարկաւոր է ընտանեկաններ կը: Տէր-Յովհաննիսեանի պաշտօնավարութեան մէջ մենք ոչինչ ազգասիրութիւն չենք տեսնում: Պարոնը փող է ստանում և պաշտօն է կատարում, աւելի ոչինչ: Մենք շատ բան կարող էինք ասել բայց դեռ սպասում ենք պ. Տէր-Յովհաննիսեանի պատասխանին:

...

ՆԱՄԱԿ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

20 յուլիսի

Ահա մի ամսից աւելի է, որ թողած երևանի անտանելի շոգերը, Կարաչիչազի հրաշալի հովտի մէջ ենք ապրում: Զարմանալի է բնութեան օրէնքը, մի տեղ շոգ մարդու հոգին է հանում մի այլ տեղ բողբոջին հակառակ կլիմայի է նւթարկված: Արդարև Կարաչիչազը շատ գեղեցիկ ամառանոց է: Նա ընկած է մի բարձրաւանդակի կուրծքի վրա, դիմել ամեն կողմից սնանուով է շրջապատած. այն ծաղիկները որոնք յերեանի պարտեզներում շատ հազաւագիտ են, այստեղի սարերը դրանցով զարգարել է բնութիւնը: Աւելորդ չէմ համարում կրկին մի քանի խօսք ասել այստեղ գտնվող հուրթիւնների վրա թէն այդ առաջին անգամը չէ որ դրանք Նի. թ են տալիս իմ գրչին: Արշակունեաց հարստութեան ժամանակ երբ առհասարակ հայերը այստեղ և այնտեղ եկեղեցիներ ու վանքեր շինելով էին զբաղված, ահա այդ ժամանակից են ապրում Կարաչիչազի հուրթիւնները: Հարտաբապետութիւնը հայերի մէջ մինչև որ ասորեան զարգացման է հասել, դրա վրա զաղափար կազմելու համար, անպատճառ պէտք է Հայաստանի հուրթիւնները տեսնել: Մի քանի վանքեր որոնց միջը ներկայ ժամանակներում կառուցանելու համար շատ հազարներ է պահանջվել, ով գիտէ դուցէ մի հայ իշխան ամառանոց գալով իր մի քանի ամսվայ կեցութեան համար է հիմնել: Այն վանքը որի մէջ այժմ ժամերգութիւն է կատարվում, այդ համարեա թէ անվաս է մնացել: Մրան կից մեծ վանքը շատ բարձր է և զարմանալիս այն է, որ այդ նկայ չնչք բարձրացած է առանց սիւնի: Մրա կաթուղիկէն խանդարված է, բայց մի կողմի վրա մտում է կաթուղիկէի մի կտորը, որի մի քանի քարերը բարձրում միջուրտով մէջ ճոճում են, նրանք կարծես թէ վեր ընկնելիս լինեն, նայողը երկիւղ է կրում մինչև անգամ նրա մօտ կանգնելու: Ապտում են որ շատ տարիներ այդպէս մտում և ով գիտէ որքան էլ կը մնայ, Աւելի ուշադրութեան արժանի են վանքերի շուրջ գտնվող գերեզմանների վրա կանգնած խաչարձանները, որպէս վանքերի պատերի վրա, այնպէս գերեզմանների և խաչարձանների վրա գրուածները շատ պարզ կարգացվում են: Գրանցից շատերը ծածկված են մասուրով և ժամանակը դրոշմել է սրանց վրա իր կնիքը: Հինոց խաչարձաններ միւսներից աւելի գեղեցիկները գրված են միմեանց կից քարի ամուր պատուանդանների վրա, դրանց վրա քանդակագործութիւնը հրաշալի է, ճարտարագետը իր գիտութեան բոլոր քան-

բարը թափել է այդ ապառաժ քարերի վրա: Ախտս վանահայր հայր սուրբը չէ լսել մի ճանապարհորդի խնդիր, երբ նա կամեցել է մինը նրանցից Եւրոպա տեղափոխել, որպէս թանգարանի վայել առարկայ: Գերեզմանաքարերի վրայի գրերից երևում է, որ այդ ննջեցեալների թուով կան եկեղեցական մարդիկներ, աշխարհականներ և իշխաններ, զրանք են այն երանելի մեր նախնիք, որոնք եկել և աղօթել են այս վանքերում և այսօր նանգիստ ննջում են այստեղ. կարծես թէ պահպաններն լինեն նայրենաց սուրբ յիշատակարաններին: Պատմութիւնը աւանդում է անցեալը, իսկ նոստրիւնները կենդանի վկաներ են նոյն անցած ու գնացած իրողութիւնների: Այս վանքերը որոնց ամեն մի քարը մեզ հայերիս համար նուիրական և սուրբ է, կարծես թէ կամայ կամայ աշխատում են անյայտացնել մարդու աչքից: Գարաշիչազում նանգիստում ենք շատ աների որոնց վրա գործ են դրված վանքերի քարերը: Արդեօք Ս. Եղիշանի նոպետ կառավարութիւնը չէր կարող վարդապետներուց մի յանձնաժողով կազմել, որի պարտքը լինէր ճշմարիտ կոթողները վրա և ոչ ոք իրաւունք չունենար նրանց մի քարը շարժել իր տեղից:

Ա. Եր.

ՆՆՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

ԵՐԵՒԱՆԻ մեր թղթակիցը գրում է. «Նորերումս մի հայ վանահայր Կարապետի կողմից Եւրոպայի քարեր բերելու ժամանակ կրկնակի շրջակայ գիւղերից մէկի մէջ Եւրոպայաբարձր սայլի վրա դնելիս—մնում է քարի տակ և անշնչանում է:»

ՄՈՉԳՎՈՒՄ հարցրում են հետեւեալ. «Պ. Պօղոս Աղաճան Երվանդ, որի ազգասիրական ձգտումները շատերին յայտնի են, և որը Մօզգօկի ազգային ուսումնարանի սակաւաթիւ պաշտպաններից մինն է, տեսնելով, թէ որքան դժուարութեամբ է ճարվում արժանաւոր վարձուհի իրանց օրիորդական ուսումնարանի համար, վճարել է այդ ուսումնարանի անուշիւներից մինին իր հաշուով թիֆլիս ուղարկել, որպէս զի այնտեղի միջնակարգ հայ—ուսումնարաններից մինում, օրինակ Գայիանեան ուսումնարանում, իր ուսումն աւարտելով և Մօզգօկ վերադառնալով, մի քանի տարի վարձուհու պաշտօն վարի ազդեղ օրիորդական դպրոցում ճանաչելով Մօզգօկը, ճանաչելով նրա հայ բնակիչների մեծ ամասնութեան անբարեացակամ յարաբերութիւնը դէպի իրանց ուսումնարանները, մենք, Մօզգօկի բոլոր բարեխիտ հայերի հետ, չենք կարող չը յայտնել մեր բաւականութեամբ և մեր նորահարկութեամբ պ. Երվանդին, եթէ որ առաջ իրագործված տեսնեք նրա բարի մտադրութիւնը:»

Մեզ հարցրում են հետեւեալ: Ամսի 22-ին առաւօտեան 8 ժամին մի սաստիկ թնդանթանան ճայթնուող սարափեցրից թիֆլիսի ստորին բնակիւց, որի պատճառը, ինչպէս մենք տեսանք, մի գերմանացուց վարձված մշակ էր, որը անգողութեամբ բաւականին վառօդ լցրած լինելով քարափի մէջ և որին կրակ տալով այդպէս սաստիկութեամբ օդը զրդացրեց: Այդ վառօդից ցրված մեծ քանակութեամբ քարերը փչել էին քարափի դիմացը գտնվող մալականի թէ պատահանների ազակիքը և թէ տան կղմնորները: Բարեբաղդաբար ոչ ոք չէր վնասվել: Ինչպէս պատմում էին, մի քանի տարի անցանց առաջ պատահած այդպիսի մի ճայթնուցից էլ թէպէտ շատերը վտանգի են ենթարկվել, այնու ամենայնիւ այդ վտանգաւոր գործին ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՒՔԻՆ

Ք. Գրան քաղաքականութիւնը պաշտպանող լրագրիւններ: Կ. Պօլսում մեծ յոյսեր ունեն անցյալ թիւը պաշտպանութեան վրա և ցանկանում են որ Ք. Գրանը մի այլպիսի դաշնագրութիւն սնն նաև Աւստրիայի հետ եւրոպական թիւրքի պաշտպանութեան հա-

մար: Կ. Պօլսից հարցրված մի հեռագրի նայելով, այդ դաշնագրութիւնն էլ արդէն կապված է սուլթանը հաւանած է որ Աւստրիան գրաւէ Բոսնիան և Հէլլէզգոլիան այն պայմանով որ պահպանէ օսմանեան երկրի ամբողջութիւնը Եւրոպայում: Այսպէս թէ Եւրոպայում և թէ Ասիայում թիւրքի պաշտպանված կը լինի ազգայ յարձակումների դէմ: Թիւրքիան ներքին երկպառակութիւնների մէջ գտնվելով, որոնք աւել վառնալու են քան թէ օտարի յարձակումները, սուլթանը իրան ազատելու և իր գահից վայր չնկնելու համար փաթաթվում է իր երկու կողմ գտնվողներին որոնք իր գահը պաշտպանելու պարտակող մտեցել են իրանց սեփական շահերը պաշտպանելու և այդ խարխուլ գահի մօտիկ ժառանգորդներ գտնալու համար: Թէպէտ երիտասարդ թիւրքերը, միջհախական կուսակցութիւնը, իրանց գոհ են ցոյց տալիս անցյալ-թիւրքաց դաշնագրութեամբ և ապահովված են կարծում թիւրքի պապան, բայց հին թիւրքերը, մանաւանդ ուլէմները, սօֆտանները, իրանց անպաւուրթիւն և մեծ վտանգ են համարում այդ: Թիւրքաց զանազան կուսակցութիւններ վերջված են տեսնելով իրերի այս խառնաշփոթ դրութիւնը սաստիկ յուզված են, եւ են զաւել, ուզում են իրար մօտեանալ, կենդանանալ և մի զորաւոր կուսակցութիւն կազմելով ազգեցութիւն գործել սուլթանի վրա, սահմանաւորել նրա բացարձակ իշխանութիւնը: Կ. Պօլսից հարցրում են որ պոլիցիան, երեք շարժի չափ առաջ, կալանաւորել է մի քանի ուլէմներ, սօֆտաններ և կառավարական պաշտօնատարներ որոնք մի տան մէջ հաւաքված գաղտնի խորհուրդ անելիս էին: Ս. Հարկէ նրանցից մի քանիսին կը բանտարկեն, մի քանիսին կաքոնեն կամ մահի կը դատապարտեն, բայց էլ կը յաջորդեն նրանց ուրիշներ և ներքին խռովութիւնները չեն վերջանայ:

Անցյալ-թիւրքաց գաշնագրութիւնը առ այժմ շահաւոր եղած է օսմանեան արժեթղթեր ունեցող և ֆինանսական գործերով պարագլուներին համար միայն, որովհետեւ այդ արժեթղթերի դերը բարձրացան: Մասնաւորապէս օտոմանեան բանկը օգուտ քաղեց Անգլիայի պրոտէկտորատից. իր սկզբաները այնպէս շուտ բարձրացան որ երևում է թէ զնորները աւելի ետանդ ունեն քան թէ խոհեմութիւն: Անցած տարի թիւրքաց կառավարութիւնը աշխատեցաւ 100 միլիոն ֆրանկի փոխառութիւն անել, զբաւ դնելով եզրագոտի տուրքի մէկ մասը. բայց այդ չափով չկարողանալով իրան Ս. Յովսից հարցրում են որ օտոմանեան բանկը նորից ձեռնարկած է այդ գործին: Յոյս կայ որ փոխառութիւնը այս անգամ աջողվի, թէպէտ ճանր տոկոսով: Այժմից սկսել են պատրաստել ֆինանսականների մտքերը որ այդ փոխառութեան մասնակցին: Ամեն տեղ լըւր են տարածում թէ լսելիքը հաւանում է վճարել 1854 և 1871 թւերի փոխառութիւնների համար գրաւը դրված եզրագոտեան տուրքի մէկ մասը: Կ. Պօլսից հարցրում են որ օտոմանեան բանկը մի գրասենեակ կը բաց անի նաև Կիպրոս կղզում:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻՍՏԻՑ

Իւերին, 26 յուլիսի

Եթէ ծանր կերպով մտածենք, չը պիտի դարձանար որ թիւրքիայի հայերը, չը նայելով իրանց աշխատանքներին և արած ջանքերին, չը հասան իրանց ցանկութիւնների իրագործմանը: Գա առաջին անգամն է որ հայերը մտածեցին զիմն Եւրոպային, հրախիտով նրա ուշադրութիւնը իրանց դրութեան վրա, հայոց ազգի գոյութեան վրա: Կարելի է ասել որ այս կողմից հայերը կատարեալ աղողութիւն ունեցան: Չը նայելով նրանց իրաւացի պահանջներին, եթէ

այս անգամ այդ պահանջները ամբողջութեամբ չընդունեցան կոնգրեսից, դորա պատճառը այն էր, որ գործը նոր էր և ինքզինը չափազանց բարդված էր, մանաւանդ պէտք է աչքի առաջ ունենանք որ նոյն իսկ այդ միջոցին յայտնվեցաւ Անգլիայի և Թիւրքիայի մէջ կապված դադարի դաշնագրութիւնը, որ պատճառեցաւ թէ «par discretion» կոնգրեսը այնուհետեւ էլ չը խօսեց փոքր-Ասիայի մասին: Ընդհանրապէս Հայաստանի անկեղծ բարեկամները այն կարծիքն են, որ հայ պատգամաւորութիւնը բոլորովին զոհ կարող է լինել իր գործունէութեամբ, մանաւանդ որ Իւրլինի դաշնագրութեան 61-որդ յօդուածը շատ աւելի ընդարձակ է, քան թէ Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-որդ յօդուածը և հայոց օգուտների վրա շատ աւելի մեծ ուշադրութիւն է դարձնում, քան թէ կարելի էր սպասել:

Բացի ստանից չը պիտի մոռնալ, որ որքան նեղաւոր և ետական էլ լինէր Անգլիայի քաղաքականութիւնը, փոքր-Ասիայի հայերը այնուամենայնիւ օգուտներ պիտի սպասեն անգլիական կառավարութիւնից: Եթէ Հայաստանի վրա անգլիական ամբողջ ազդեցութիւնը նորանում պարունակվէր անգամ, որ Անգլիան էր նպատակն էր համար երկաթուղիներ և ճանապարհներ շինէր Հայաստանում,—այդ էլ բաւական մեծ առաջադիմութիւն կարելի էր համարել: Բայց յոյս կայ որ անկասկած Անգլիան շատ ուրիշ բաներ էլ պիտի կատարէ երկրի անտեսական և մտաւոր զարգացման համար, թէև իմ կարծիքով նորկաւորութիւն չը կայ ոգեւորվել կամ յափշտակվել Անգլիայի մասնաւոր քաղաքականութեամբ:

Ինչպէս յայտնի է անգլիացիները արդէն ստացել են թիւրքաց միջխտրութիւնից Մերսին-Կիարբեկլը-Էրզրումի երկաթուղու շինութեան կոնցէսիայի իրաւունքը:

Եթէ Հայաստանում անգլիացիներին այնպէս հասկանան, ինչպէս որ նոքա են,—այն ժամանակ նոքա ոչ միայն միտասակար չեն լինի իրանց ետակարութեամբ և շահաւոր քաղաքականութեամբ երկրի համար, այլ և օգուտէտ էլ կը լինեն: Հայերը չը պէտք է ոգեւորվեն անգլիացիներով, այլ պէտք է զգոյշ լինեն, պէտք է աշխատեն թափանցել նրանց ետական նպատակները, պէտք է նրանցից այն օգուտը քաղեն իրանց երկրի համար, ինչ օգուտ որ քաղեցին Անգլիայից առաջ բարեկարգութիւններից յոյներով բնակեցրած մի քանի կղզիներ, որոնք անգլիացիներին ձուլեցին էին:

Թիւրքաց Հայաստանի ապագան չը պէտք է անտանելի համարել, ինչպէս որ շատերը կարծում են: Ես օպտիմիստ չեմ, բայց համոզված եմ, որ կոնգրեսում հայերը առաջին քայլն արին դէպի իրանց հայրենիքի աւելի աջող և պայծառ ապագան:

Այսօրվայ նամակս կարճ եղաւ, Բայց մի քանի ժամանակից յետոյ, երբ պարագլուներինցս քիչ շատ աւելի ազատ կը զգամ ինձ, գուցէ մանրամասն յօդուած կը պատրաստեմ կոնգրեսի հետեանքների մասին:

Ա. Արծրունի

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՍԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 22 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 1/8 ռ., երկրորդ 96 ռ. 25 կ. երրորդ 96 ռ., չորրորդ 95 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 234 ռ. 25 կ., երկրորդ 233 ռ. 75 կ., արևելեան 95 ռ. 50 կ., ոսկի 7 ռ. 77 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25 1/16 պէնս, ռուսաց 100 ռուբլ Կերմանիայի վրա արժէ 216 մարկ 75 ֆէն., փարիզի վրա 267 Ֆրանկ: Տրամադրութիւնը դանդաղ է: Կերսոնի Կովկասի 245, Ամերիկայի 320:

ՎԻԵՆՆԱ, 22 յուլիսի (3 օգոստոսի): «Polit. Corresp.» լրագիրը հարցրում է, որ ռուսաց ղեկաւոր Լոբանով-Ռոստովկի զորում է Բ. Գրանը շուտով մաքրել Վարնա բերդը: Ռուսաց զօրքերը Կ. Պօլսի առաջ շարունակում են սաստիկ ամրանալ:

Կ. ՊՈԼԻՍ, 22 յուլիսի (3 օգոստոսի): Յունաց պարիւրքը սաստիկ հիւանդացաւ: Բաթում և Վարնա բերդերը առաներին յանձնելու հարցում մինչև այժմ ոչինչ փոփոխութիւն չէ եղել:

ԼՕՆԳՕՆ, 22 յուլիսի (3 օգոստոսի): Համայնքների ժողովը մերժեց Հարախուստի ձեւակերպութիւնը:

Կ. ՊՈԼԻՍ, 21 յուլիսի (2 օգոստոսի): Մարտիկները զինեցին Եւրոպական պետութիւնների ղեկաւորներին Կ. Պօլսում մի գրութեամբ Լիվանի կառավարութեան մասին: Նրա մէջ պահանջում են նշանակել մի մասնաժողով մարտիկների կախկոպոսի կալանաւորելու գործը և Լիվանի քրիստոնէյ ազգաբնակչութեան միւս գանդատները քննելու համար:

ԲԵՐԼԻՆ, 21 յուլիսի (2 օգոստոսի): Ընտրութիւնների մեծամասնութիւնը ազատամիտ կուսակցութեան կողմն է: Բայիստազը կը բացվի սեպտեմբերի 9-ին: Աւստրիական առաջապահ զօրքերը Կիբլինից հասան Բանիպուկի:

Կ. ՊՈԼԻՍ, 23 յուլիսի (4 օգոստոսի): Մօստարայում ժողովրդական խառնութիւն կայ Կայնակամը և մուֆտին սպանված են: Մէկ ուլում նահանգապետ է ընտրված: Թիւրքաց զօրքերի երեք բաւալիները եղբայրացան ապստամբների հետ: Երեք միւս բաւալիները ապստամբութեան հակառակ յայտնեցին իրանց և վճռեցին իրր թէ միանալ աւստրիական զօրքերի հետ, բայց իսկապէս դնացին Մեոկօլիէ և վճռեցին հարկաւոր դէպքում փախել աւստրիական երկիրը:

ԼՕՆԳՕՆ, 24 յուլիսի (5 օգոստոսի): «Times» լրագիրը հարցրում է, որ Ֆրանսիական ղեկաւոր Յուրնիէ, հրաժարական առնելով սուլթանից յայտնեց նրան, որ Բ. Գրան մերժումը Յունաստանի վերաբերութեամբ կոնգրեսի վճիռը կատարելու, կը հետեւանի Եւրոպական պետութիւնների միջամտութիւնը, որի վերաբերութեամբ Յրանսիան էլ չէ կարող անտարբեր մնալ:

Կ. ՊՈԼԻՍ, 24 յուլիսի (5 օգոստոսի): Ռուսները պահանջում են, որ Բօզոպլան ապստամբները մաքրեն 10 օրվայ միջոցում Արևելեան Բուսնիէ, հակառակ դէպքում ռուսները ստիպված կը լինեն ոյժ գործ դնել Ապստամբների պետերից երկուսը յայտնեցին Լայարդին, որ նոքա վճռել են ընդդիմադրել:

ԼՕՆԳՕՆ, 24 յուլիսի (5 օգոստոսի): Այս տարի պարլամենտը արձակվելու է: ՄԵՏԱՉՎԱԻՉ, 24 յուլիսի (5 օգոստոսի): Մօստարայում ամբոխը կողպոտեց քաղաքը, տիրեց զինարանները, յափշտակեց զէնքեր և պատերազմական պաշտրերը:

ՎԻԵՆՆԱ, 24 յուլիսի (5 օգոստոսի): Պաշտօնական «Abendpost» լրագիրը հարցրում է, որ աւստրիական հուսարներին մի էակաբրօնի և բունիացիների մէջ Ձկացիէ և Մօզլայի մօտ կռիւ է պատահել, որի ժամանակ ընկան 70 հուսարներ: Նոյնպէս դէպի Մօստարա քնալու ժամանակ, յուլիսի 23-ին (օգոստոսի 4-ին) աւստրիական զօրքը կարճատե կռիւ ունեցաւ Չիտալսկի մօտ 500 ապստամբների դէմ որոնցից մի քանի մարդիկ վերաւորված և սպանված են: Չորս աւստրիական զօրքերի գլխաւոր կօշը առաջանում է Բոսնա գետի ձորով:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 25 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ռ. 25 կ. երկրորդ 96 ռ. 37 կ., երրորդ 96 ռ. 12 կ., չորրորդ 95 ռ. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 233 ռ. 75 կ., երկրորդ 233 ռ. 75 կ., արևելեան 95 ռ. 25 կ., ոսկին 7 ռ. 79 կ.: Տրամադրութիւնը հանդարտ է:

საქართველოს მთავრობის განცხადება

საქართველოს მთავრობის განცხადება საქართველოს მთავრობის განცხადება საქართველოს მთავრობის განცხადება

საქართველოს მთავრობის განცხადება საქართველოს მთავრობის განცხადება საქართველოს მთავრობის განცხადება

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ ВЪ ГАЛЕРЕЕЪ АРЦРУНИ. ԱՐՇԱՐՈՒՆԻ ԳԱԼԵՐԵՆԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՆՆՆԵՐԻՆԻ ՎՈՐՁՈՎ ԵՆ ՏԵՂՈՒՄ ԽՆՆՈՒԹՆԵՐԸ

8. Եկեղեցիականաց

- 1) Ընթերցարան հայերեն լեզուի... 2) Ընթերցարան անգլերեն լեզուի...

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՒՄԱՆ ԿՆՆՆԵՐԻՆԻ

Կենտրոնական գրավումային կոմիտեի կողմից հայտարարված կենտրոնական գրավումային կոմիտեի կողմից հայտարարված

Երևանյան սուրբ Գևորգյան Օրհորուց Գրարանի կողմից հայտարարված գրավումային կոմիտեի կողմից հայտարարված

ՓԱՍԵՆԻ Ի ՈՐՈՒՆ

Փասենի օրհորուց հայտարարված գրավումային կոմիտեի կողմից հայտարարված

ԿՈՆՏՐԱ ԳԱԼԵՐԵՆԻ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՄԻՇՐՈՒՆԻ ԳԱԼԵՐԵՆԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՆՆՆԵՐԻՆԻ ԿՆՆՆԵՐԻՆԻ ՎՈՐՁՈՎ ԵՆ ՏԵՂՈՒՄ

ԿՈՒԿԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՈՒՄԱՆ ԿՆՆՆԵՐԻՆԻ

- 1. Կոստանյան գրավումային կոմիտեի կողմից հայտարարված... 2. Կոստանյան գրավումային կոմիտեի կողմից հայտարարված...

Table with multiple columns containing financial data, exchange rates, and prices for various goods and services in Tiflis, 1878.